**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
***«Վանանդ ագրո» ՓԲԸ-ի կողմից նախատեսվող Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների /2-րդ լսում/***

14.11.2025թ.

Արմավիրի մարզ,
Բաղրամյան համայնք,
Վանանդ բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք, 03.05.2023թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. նոյեմբերի 14-ին՝ ժամը 14:30-ին, Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Վանանդ ագրո» ՓԲԸ-ի կողմից նախատեսվող Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար, ինչպես նաև տեղադրված է եղել Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում, իսկ շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել մինչ հանրային լսումն իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել նաև Բաղրամյանի համայնքապետարան, ինչպես նաև նախօրոք գրանցվել հանրային քննակումներին մասնակցելու համար:

Հանրային քննարկմանը ներկա էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը, Բաղրամյան համայնքի ղեկավարի տեղակալ Հովնան Ավետիսյանը, Վանանդ բնակավայրի վարչական ղեկավարը, մարզպետարանի, համայնքապետարանի ներկայացուցիչները «Վանանդ ագրո» ՓԲԸ-ի գործառնական տնօրեն Բաբկեն Բաբայանը, «Քոնսէկոարդ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ ՇՄԱԳ իրականացնող մասնագետ Արման Խաչատրյանը, բնակավայրի բնակիչներ:

Հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին, ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը և փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարված աշխատանքները:

Նա նշեց, որ ՀՀ օրենսդրության համաձայն նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի: Փորձաքննության իրականացման համար օլրենքով սահմանված է 40 աշխատանքային օր: ՇՄԱԳ հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ՝ կարծիքներ ստանալու համար:

Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա այն ներկայացվել է

նախաձեռնողին՝ լրամշակման: Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվել են հանրային լսումներ: Նա ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, թե ՇՄԱԳ հաշվետվությամբ ինչ է նախատեսվում իրականացնել, նշեց, որ 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը և այսօր արդեն անցկացվում է 2-րդ հանրային լսումը:

Վարդանյանը ներկայացրեց, որ Օրենքի 17-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն Փորձաքննության գործընթացի լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով փորձաքննական գործընթացի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 աշխատանքային օրով, Օրենքի 29-րդ հոդված 4-րդ մասի 3)-րդ կետի՝ ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում շահագրգիռ հանրության հնարավոր գրավոր կամ էլեկտրոնային առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները ներկայացնելու նպատակով:

Ներկայացրեց, որ Օրենքով սահմանված կարգով գործունեության ենթակա տարածքում իրականացվել է տեղազննման աշխատանքներ և դիտարկումներ՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով: Նշեց, որ տարածքի ուսումնասիրության արդյունքում որևէ անճշտություն չի արձանագրվել, տարածքում ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված որևէ գործունեություն չի իրականացվում:

Այնուհետև նախագծի մանրամասները և բնապահպանական հարցերը ներկայացնելու նպատակով նա խոսքը փոխանցեց ՇՄԱԳ իրականացնող մասնագետ Արման Խաչատրյանին:

Խաչատրյանը ներկայացրեց ՇՄԱԳ նախագծով նախատեսված գործունեությունը:

Ներկայացրեց գործունեության տեխնիկական ցուցանիշները, նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները մեղմող միջոցառումները:

Համայնքի ներկայացուցիչը, ներկաները ողջունեցին նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում նախատեսվող արտադրության աշխատանքները:

Գործունեության վերաբերյալ այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

Մասնակիցների ցանկը և հանրային լսման տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյան

«Վանանդ ագրո» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն՝ Բաբկեն Բաբայան